Ամառային ուսուցում
(2020 թվականի հունիսի 29-ից հուլիսի 4)

ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳՐՔԻ ԵՎ ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Առանցքային դրույթներ.

Եհովան նրբասիրտ Աստված է, և Երեմիան, իր նրբասրտությամբ,
բացարձակապես մեկ էր Աստծու հետ. ուստի Աստված կարողացավ
օգտագործել Երեմիա մարգարեին՝ հաղթողին,
որպեսզի նա արտահայտի Իրեն, խոսի Իր անունից և
ներկայացնի Իրեն՝ նույնիսկ իր լացի մեջ:

Երեմիայի մարգարեությունը՝ գիրք, որը լի է Իսրայելի մեղքի և
Աստծու բարկության, տույժերի և
պատիժների մասին խոսքով, բացահայտում է, որ

Աստված մտադիր է Իր տնտեսության մեջ լինելու
կենդանի ջրերի ակունքը, սկզբնաղբյուրը, որպեսզի
Իրեն բաշխի Իր ընտրյալ մարդկանց մեջ՝ նրանց
բավարարվածության ու վայելքի համար՝ նպատակ ունենալով
առաջացնելու եկեղեցին՝ Աստծու զույգին, որպես
Աստծու մեծացումը, Աստծու ընդարձակումը, որը կլինի
Աստծու լեցունությունը Նրա արտահայտության համար:

Աստված հավիտենական է և անփոփոխ, ենթակա չէ որևէ
փոփոխության, որը կարող է լինել միջավայրի և
իրավիճակների պատճառով, և Աստծու գահն Իր
հավիտենական և անփոփոխ կառավարությունն է. Երեմիան,
ելնելով իր մարդկային զգացմունքներից, դիպել էր
Աստծու հավիտենական էությանը և Աստծու գահին, և
մտել էր Աստծու աստվածայնության մեջ:

Աստված՝ որպես մեր Բրուտը, մեզ գերիշխանորեն
ստեղծել է Իր անոթները, Իր պարունակիչները լինելու համար,
որպեսզի պարունակենք Իրեն՝ Իր նախասահմանության համաձայն.
մարդուն ստեղծելու առնչությամբ Աստծու մտահղացումն այն էր,
որ նրան դարձնի Իր անոթը, Իր հողեղեն պարունակիչը,
որպեսզի նա պարունակի Քրիստոսին և լցվի Քրիստոսով՝
որպես կյանքով՝ կառուցելու համար Քրիստոսի Մարմինը՝
որպես Աստծու մեծ ընդհանրական անոթը՝
Իր արտահայտության համար:

Որպես Աստծու սրտի համաձայն Հովիվը՝ Քրիստոսը՝
ոչխարների մեծ Հովիվը, շարունակում է Իր հովվությունը՝
առաքյալների սպասավորությունը միավորելով Իր երկնային
սպասավորության հետ, որպեսզի հովվի Աստծու հոտը.
Տիրոջ վերականգնման մեջ այսօր անհրաժեշտ է գիտակցել,
որ հովվությունը, որը կառուցում է Քրիստոսի Մարմինը,
փոխադարձ հովվություն է, և մենք պետք է հովվենք միմյանց
Աստծու համաձայն՝ ընդունելով հոտի համաբովանդակ,
նուրբ հոգատարությունը:

Աստծու հետ մեկ լինելու համար մեզ անհրաժեշտ է,
որ Քրիստոսը՝ որպես Դավթի Ընձյուղը, լինի մեր փրկագնումը և
արդարացումը. սա Եռամեկ Աստծուն բերում է մեր մեջ՝
լինելու մեր կյանքը, մեր ներքին կյանքի օրենքը, մեր ունակությունը
և մեր ամեն ինչը, որպեսզի Իրեն բաշխի մեր էության մեջ՝
իրագործելու համար Իր տնտեսությունը. սա նոր ուխտն է,
որով կարող ենք ճանաչել Աստծուն, ապրել Աստծուն և
դառնալ Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ,
որպեսզի դառնանք Իր ընդհանրական արտահայտությունը՝
որպես Նոր Երուսաղեմը:

© 2020 Living Stream Ministry

Ուրվագիր առաջին

Երեմիան՝ նրբասիրտ Աստծու նրբասիրտ մարգարեն

Գրվածքների ընթերցում. Երմ 1:1, 4-8, 10, 18-19, 4:19, 9:1, 10, 13:17

I. Երեմիան ի ծնե քահանա էր, բայց Աստված նրան կանչեց մարգարե լինելու ոչ միայն Իսրայելի ազգի համար, այլև բոլոր ազգերի. ուստի նա քահանա-մարգարե էր՝ Երմ 1:1, 4-8:

II. Եհովան Երեմիային նշանակեց ազգերի վրա և թագավորությունների վրա, որպեսզի պոկի ու ավերի, ոչնչացնի ու տապալի և կառուցի ու տնկի՝ խ. 10.

Ա. Պոկելը, ավերելն ու ոչնչացնելը Եհովայի տապալելն են, մինչդեռ կառուցելն ու տնկելը Եհովայի բարձրացնելն են:

Բ. Սա համապատասխանում է «Երեմիա» անվան երկու նշանակությունների. «Եհովան բարձացնում է» և «Եհովան տապալում է»:

III. Եհովան Երեմիային դարձրեց ամրացված քաղաք, երկաթե սյուն և բրոնզե պարիսպներ՝ ընդդեմ ողջ երկրի, Հուդայի թագավորների, դրա իշխանների, դրա քահանաների և երկրի ժողովրդի. նրանք կմարտնչեն նրա դեմ, բայց նրան չեն հաղթահարի՝ խխ. 18-19.

Ա. Երկրի վրա միշտ պատերազմ է մոլեգնում Աստծու և նրանց միջև, ովքեր ընդդիմանում են Նրան և մարտնչում Նրա դեմ՝ Եփս 6:12:

Բ. Աստված ոչ թե անմիջականորեն Ինքն է մարտնչում, այլ Իր ծառաների միջոցով, ովքեր Իր կողմից ուղարկվել են՝ Ա Տմթ 1:18, 6:12, Բ Տմթ 4:7:

Գ. Աստված ուղարկեց Իր զորքը՝ Երեմիա անունով մի երիտասարդի, որպեսզի նա մարտնչի նրանց դեմ, ովքեր ընդդիմանում էին Իրեն.

1. Երեմիան այն աստիճան էր Աստծու կողմից սպառազինված, որ դարձել էր ամրացված քաղաք և երկաթե սյուն ու բրոնզե պարիսպներ՝ Երմ 1:18:
2. Ովքեր մարտնչում էին Երեմիայի՝ Աստծու՝ մեկ մարդուց բաղկացած բանակի դեմ, փաստացի Եհովայի դեմ էին մարտնչում՝ խ. 19ա:
3. Ոչ ոք չէր հաղթում նրան, որովհետև Եհովան նրա հետ էր՝ խ. 19բ:

IV. Երեմիան Աստծու անունից խոսող հաղթող էր՝ խխ. 9-10, 2:1-2.

Ա. Նախատիպերի դարաշրջանում հաղթողները մարգարեներն էին. բոլոր իսկական մարգարեները հաղթողներ էին:

Բ. Երբ Աստծու ժողովրդի մեծամասնությունը ամայացում էր ապրել, կարիք կար, որ ոմանք բարձրանային՝ լինելու Աստծու հաղթողները, պահելու Աստծու հաստատած վկայությունը:

Գ. Մարգարեները նախևառաջ հոգ էին տանում Աստծու խոսելու համար, և այդ խոսելու հիման վրա նրանք ինչ-որ չափով կիրառում էին Աստծու իշխանությունը, ինչը երևում է Դավիթ թագավորի և Նաթան մարգարեի պարագայում՝ Բ Թգ 7:1-17, 12:1-15:

Դ. Հյտ 2-3-րդ գլուխների հաղթողները մարգարեների՝ որպես նախատիպերի իրականացումն են:

Ե. Որպես հաղթող՝ Երեմիան «հակավկայություն» էր.
1. Իսրայելի զավակներն ամայացել էին, և Աստված Երեմիային կանչեց «հակավկայություն» լինելու՝ Երմ 27:1-15:
2. Աստծու մարդիկ չէին գիտակցում, որ Աստծու առջև խորապես մեղքի մեջ էին, և որ Աստված արդեն նրանց պատժելու համար սահմանել էր Բաբելոնը և Բաբելոն գերի տարվելը՝ 15:12-14:
3. Քանի որ Իսրայելն այսպիսի թմրած վիճակում էր հայտնվել, Երեմիան՝ հաղթողը, «հակավկայություն» էր՝ խոսելով իրեն Եհովայի տված խոսքն ու հանդես գալով սուտ մարգարեների դեմ՝ 27:16—28:17:

V. Երեմիայի Գրքի բնորոշ գիծն ու դիրքն Աստծու նրբասրտությունն է և Աստծու արդարությունը՝ 9:10-11; 23:5-6, 33:16.

Ա. Մեր Աստված նրբասիրտ է, կարեկցանքով ու խղճահարությամբ լի, սակայն բացարձակապես արդար՝ 9:10-11; 23:6:

Բ. Երեմիայի Գրքի համաձայն՝ Աստծու սերը Նրա նուրբ հոգատարության, կարեկցանքի և խղճահարության համադրությունն է. նույնիսկ երբ Նա պատժում է Իր ընտրյալ Իսրայելի ժողովրդին, նրա հանդեպ կարեկցալի է՝ Ողբ 3:22-23:

Գ. Երմ 9:10-11 և 17-19-ում ասվածն արտահայտում է Եհովայի զգացմունքն առ այն, որ Իսրայելը չարչարվում է Նրա հասցրած ուղղումից.
1. Թեև Եհովան պատժում էր Իսրայելին, բայց, միևնույն է, կարեկցում էր նրան:
2. 18-րդ խոսքի «մեզ» ու «մեր» բառերը ցույց են տալիս, որ Եհովան Իրեն միացնում էր չարչարվող ժողովրդին ու նրա չարչարանքներում մեկ էր նրա հետ:
3. Եհովան Ինքը կարեկցանքով լաց էր լինում Իր ժողովրդի հետ:

VI. Երեմիայի Գիրքը նաև ինքնակենսագրություն է, որով Երեմիան պատմում է իր իրավիճակի, իր անձի և իր զգացմունքի մասին՝ բացահայտելով իր նուրբ սիրտը.

Ա. Աստված նուրբ է, սիրող, կարեկցող և արդար, և Երեմիային՝ մի երկչոտ երիտասարդի, Աստված բարձրացրել էր, որպեսզի նա լիներ Իր խոսափողը՝ խոսելու Իր անունից և արտահայտելու Իրեն՝ 3:6-11, 4:3-31, 32:26-27, 33:1-2:

Բ. Եհովան նրբասիրտ Աստված է, և Երեմիան, լինելով նրբասիրտ, բացարձակապես մեկ էր Աստծու հետ. ուստի Աստված կարողանում էր օգտագործել Երեմիա մարգարեին՝ որպեսզի նա Իրեն արտահայտեր, Իր անունից խոսեր և Իրեն ներկայացներ՝ 2:1–3:5, 4:19, 9:1, 10:

Գ. Եհովան եկավ ուղղելու Իր կեղծավոր երկրպագուներին, ու Երեմիան արձագանքեց Եհովայի ուղղմանը. մարգարեի արձագանքը շատ նուրբ էր, կարեկցալի և խղճահարությամբ լի՝ 8:18-19, 21-22, 9:1-2,10:19-25:

Դ. Երեմիան լաց էր լինում հանուն Աստծու. նրա լացելն արտահայտում էր Աստծու լացելը՝ 4:19, 9:1, 13:17.
1. Երեմիան իր լացով ներկայացնում էր Աստծուն՝ 9:10:
2. Կարելի է ասել, որ Երեմիայի լացի ներսում Աստված էր լաց լինում, որովհետև Երեմիան լաց լինելիս մեկ էր Աստծու հետ՝ 13:17:

Ե. Քանի որ Երեմիան հաճախ էր լաց լինում, նույնիսկ՝ ողբում, նա կոչվում է լացող մարգարե՝ 1:16, 2:11, 3:48.

1. Թեև Աստված վշտացած ու վիրավորված էր Իր ժողովրդից, Նա ստիպված էր երկրի վրա գտնել մեկին, ով կունենար այս զգացմունքները:
2. Երբ Նրա Հոգին եկավ հենց այս անձի՝ Երեմիայի վրա, և Իր զգացմունքները դրեց Երեմիայի հոգու մեջ, մարգարեն դրանից հետո կարողացավ արտահայտել Աստծու տխուր զգացմունքը:
3. Երեմիայի Գիրքը կարդալիս կարող ենք զգալ, որ թեև նա լաց էր լինում, նրա զգացմունքները կարգավարժվել էին՝ 4:19, 9:1, 10, 13:17:
4. Երեմիայի վշտալի և լացող զգացմունքներն այնպես էին կարգավարժվել ու սահմանափակվել, որ Աստված կարողանում էր գալ նրա մոտ և օգտագործել նրան՝ արտահայտելու համար Իր սրտի վշտալի զգացմունքները:

VII. Որպեսզի Աստված կարողանա մեր միջոցով լիովին արտահայտվել, անհրաժեշտ է, որ մենք հոգևոր զգացմունքներ ունենանք, միմյանց հանդեպ նրբասիրտ լինենք ու կարողանանք արցունքներով ծառայել Աստծուն՝ Հկբ 5:11, Ելց 34:6, Սղմ 103:8.

Ա. Հոգևոր մարդը լի է զգացմունքներով. որքան հոգևոր ենք, այնքան մեր զգացմունքները հարուստ են՝ Ա Կրթ 4:21, Բ Կրթ 6:11, 7:3, 10:1, 12:15.

1. Անհրաժեշտ է, որ Տերն աշխատի մեզ վրա, մինչև մեր զգացմունքները նուրբ և փափուկ լինեն:
2. Ամեն անգամ, երբ Աստված աշխատում է մեզ վրա, պատժում է մեզ և ներգործության ենթարկում, մեր զգացմունքներն ավելի նուրբ և ավելի զգայուն են դառնում. սա է արտաքին մարդուն ջախջախելու ամենախոր դասը՝ Եփս 4:16:

Բ. Եկեղեցական կյանքում մենք պետք է միմյանց հանդեպ նրբասիրտ լինենք՝ Եփս 4:32.

1. Մենք չպետք է դատենք ու դատապարտենք մեր հավատակիցներին, այլ նրանց հանդեպ բարի լինենք, նրբասիրտ՝ ներելով նրանց, ինչպես Աստված էլ Քրիստոսի մեջ մեզ ներեց՝ Ղկս 6:37, Եփս 4:32:
2. Որքան շատ ենք Քրիստոսին փորձառաբար ապրում որպես մեր կենսամատակարարման, այնքան շատ են մեր սրտերը նուրբ դառնում, իսկ երբ նրբասիրտ լինենք, կներենք ուրիշներին:

Գ. Պողոս առաքյալն արցունքներով էր ծառայում Տիրոջը և արցունքներով սրբերին խրատում՝ 20:19, 31, Փլպ 3:18.

1. Եթե չգիտենք, թե ինչպես լաց լինենք կամ արցունք թափենք, ապա շատ հոգևոր չենք:
2. Երբ ապրենք հոգում՝ մեր շունչն օգտագործելով որպես օրգան, կկարողանանք ծառայել Տիրոջն ու արցունքներով խրատել սրբերին՝ Գրծ 20:19, 31:

Դ. «Մեծ նեղությունից ու սրտի կսկծից» Պողոսը «բազում արցունքներով» գրեց կորնթացիներին՝ Բ Կրթ 2:4.

1. Պողոսի արտահայտությունը նուրբ էր և լի սպասավորող կյանքի մտերմիկ հոգացողությամբ՝ 11:28, 12:15:

2. Բ Կրթ 7-ում Պողոսը կորնթացիների հանդեպ խոր, նուրբ և մտերմիկ հոգացողություն ուներ. նրա ասածը շատ հուզիչ է՝ խխ. 2-3:
3. Քանի որ Պողոսի արտահայտությունը նուրբ էր և լի մտերմիկ հոգացողությամբ, այն ուներ զորություն և ազդեցություն և ի վիճակի էր խորապես հուզելու հավատացյալներին:

Ե. Երբ մենք եկեղեցական կյանքում Բախայի (լացի) հովտով ենք անցնում, Աստված այս հովիտը դարձնում է աղբյուր. այս աղբյուրը Հոգին է՝ Սղմ 84:6, Հվի 4:14, 7:38-39.
1. Որքան շատ ենք Սիոնի ճանապարհներին լաց լինում (Սղմ 84:5), այնքան շատ ենք Հոգուն ստանում. մինչ լաց ենք լինում, մենք լցվում ենք Հոգով, և Հոգին դառնում է մեր աղբյուրը:
2. Մեր թափած արցունքները մեր սեփականն են, բայց այս արցունքների հետևանքն աղբյուրն է, որը դառնում է վաղ անձրևը՝ Հոգին՝ որպես օրհնություն՝ Զք 10:1, Գղտ 3:14, Եփս 1:3:

© 2020 Living Stream Ministry